ԼԷ.

Առօրեայ գործերու խղճամիտ համարատուութենէ մը և ծանօթներու և պարագաներու շուրջ լուրեր հաղորդելէ վերջը՝ Հ. Միքայէլ Վ. կու տայ առ Մի. Աբբահայր հետևեալ հետաքրքրաշարժ տեղեկութիւնները։

Գերյարգելոյ Աբբայ Հօր մերոյ, տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանուրեան Վարդապետի

... ութ ինն ամիս է, որ ի մէջ ակնցոց մեծ չփոթ և մատնութիւն և անիրաւութիւն և կռիւ գոյ վասն էյալէթի պարտուց և գործելու ըստկի վճարելու վասն մատենից։ Զի-բեարս մատնեն մինչև 150, տարէն ի վեր եկողաց ազգականացն, առանց դատի և դատաստանի տուգանք առնուն, յառաջ սիրկիւնի ձայն հանեցին, բայց մեծամեծ սառաֆք դադարեցուցին. բայց յայժմ կռիւ, անիրաւութիւն և մատնութիւնք լինին. ի մահտեսի Սահակէն 300 ղուշ առին. և զկնի սակաւուց ժամանակաց, գայլ ևս խնդրեցին, նա ևս յայժմ արզուհալ արարեալ Վէզիրին, ի դատաստան մտանելոց է, յետոյ թէ զինչ լինելոց է ոչ գիտեմք։ Մինչև ի սահաթճի Պետրոսին տղէն, 20 ղուշ առին. որ սահաթճի Պետրոսն ի Ստամպոլ է ծներ. և այս ևս մեծ պատիժ մի է ազգին մերոյ, վասն գտման նոր հրահալելեաց որով հարստանայ տաճիկն, ազգն մեր այրի, կարծեմ թէ նեռն մերձ է գալու...։ Նաև հալածանք ոչ պակասին. ևս առաւել ի մեծ պահուցս կասկածիմք լինիլ վասն ծռազատկին, մի գուցէ ուղղափառքն ընդ լաթինացւոց և ընդ յունաց առնիցեն, որք են ի միասին, այլ զիւրեանց ծուռն, յոր և մեծ գտանեցաք առնել ընդ Հայոց, զի եպիսկոպոս այնպէս հրամայեաց։ Նաև յունաց և հայոց պատրիարքն միմեանց խօսք և զրոյց արարին առաջի իշխանաց տաճկաց մատնիչ լինեն միմեանց, և յԵրուսաղէմ երկոքեանն ևս առնիցեն զիւրեանց սովորութիւնն ուրոյն, և երկոքեանն ևս յեկեղեցիս իւրեանց ծանուցումն և բանադրանք կարգեալ, զի մի ազգ միւսոյն վատ ոչ ասիցէ. բարի և մեծ իմն է, թէ այսպէս լինիցի. և այսպէս ասեն թէ հայք ֆէրման առեալ և ուղղարկեալ յԵրուսաղէմ, զի յոյնք ի յիւրեանց զատկի չորեքշաբթի չուեցին յԵրուսաղէմայ։ Ի վերայ այսր ամենայնի յունաց կանայքն զստանաւոր չինեալ՝ ի բաղանիս զկանայս հայոց ծաղր արարեալ ասեն։...

1729 *մարտ 2ին*
ի տօնի մոխրոց ձեր
[Թօխաթ]

Գերյարգութեան քում
Ճնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

ԼԸ.

Հետևեալ նիւթը հետաքրքրական ըլլալէ աւելի՝ պատմական տեսակէտով կարևորութիւն ունի։ Ահմէտ Գ.ի սուլթանութեան ժամանակն է՝ որ տեղի ունեցած են մէջ բերուած դէպքերը։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանուրեան վարդապետի

... ասէն բուռն արկանեմ զերկուց իրաց համառօտապէս ճառել. զի իբրու երկու ամիս յառաջ մատանին զազանիս այսորիկ հրամայեաց, թէ զորմունս տանց թէ փողո-